Դասընթացի մասնակցության հրավեր

ՀՀ Էկոնոմիկայի նախարարության Զբոսաշրջության կոմիտեի աջակցությամբ «Բի Էս Սի» Բիզնեսի Աջակցման Կենտրոնն իրականացնում է «Մարդկային ռեսուրսների զարգացմանն ուղղված դասընթացների կազմակերպում՝ ՀՀ մարզերում արկածային զբոսաշրջություն իրականացնողների համար» ծրագիրը՝ Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքում:
Ծրագիրը պարունակում է տեսական և գործնական դասընթացներ, իսկ մասնակցությունն անվճար է:
Ծրագրին կարող են դիմել այն անձինք, ովքեր ոլորտային գործունեություն են ծավալում կամ ցանկանում են ոլորտ մուտք գործել:

Դասընթացի թեմաները ներառում են.

- արկածային զբոսաշրջության ոլորտի առանձնահատկությունները,
- ոլորտի միջազգային և հայաստանյան փորձառությունը,
- արկածային զբոսաշրջության տեսարժան վայրեր,
- երթուղիների և փաթեթների կազմում,
- խմբերի կառավարում:

Մասնակիցները հնարավորություն կունենան.

- ձեռք բերելու ոլորտային գիտելիքներ և հմտություններ,
- ամրապնդելու գիտելիքները՝ պրակտիկ այցելությունների և աշխատանքներիմիջոցով,
- ստեղծելու նոր ծանոթություններ և կապեր,
- կիսելու իրենց փորձառությունը,
- կառուցելու համագործակցության նոր ուղիներ:

Դիմելու վերջնաժամկետ՝ 12.04.2023թ

Գրանցման հղում՝ https://forms.gle/4aFEf9SPJRUxi39g9

Դասընթացի տևողությունը՝ մեկ ամիս: